կռիւը, եւ «Այն օրից, ասաց տիկինը, խեղճ աղջիկը գժուած է Ասլանի համար»...

— Բայց նա որքան քաջ է, այնքան եւ լաւ մարդ է, — աւելացրուց տիկինը: — Շատ անգամ նա մխիթարել է ինձ սիրելի ամուսնիս մասին, շատ անգամ խրատներ է տուել, թէ որպէս պէտք է կրթեմ սիրուն զաւակիս: Նա մի կատարեալ շէյխ է, միայն դիրքն է պակաս...

Ինձ շատ գրաւեց տիկնոջ համակրական զգացմունքը դէպի ազնիւ մարդը:

— Թուրքին խենթ է, — ասաց նա, — չէ ճանաչում նրան:

Եւ նա դիմեց դէպի վրանները, ինձ թողնելով վտակի ափի մօտ:

Ասլանը եւ բէկը վերադարձան խիստ ուշ, քան թէ մենք մտածում էինք: Եկածին պէս նա մի փոքր հաց խնդրեց, կերաւ, եւ ինձ պատուիրեց, որ պատրաստեմ, որովհետեւ կէս ժամից յետոյ ինքը պէտք է ճանապարհ ընկնէր դէպի Վան գնալու: Նոյն միջոցին նա բաց արեց թղթերի մի պահարան, եւ կամենում էր այնտեղ դնել մի հաստ թերթ, որի վրայ երեւաց ինձ մի նկարուած պատկեր: Ես մօտեցայ, որ տեսնեմ պատկերները: Նա չգաղեց ինձանից եւ ցոյց տուեց:

Դա աւերակ բերդի պատկերն էր, որին գնացել էր նա հետազօտելու: Թղթի վրայ երեւում էր բերդը իր աշտարակներով եւ կիսակործան փլատակներով, երեւում էին լեռները, շաւիղները եւ բերդի բոլոր մերձակայքը, այնքան կենդանի կերպով նկարուած, որ կարծես իսկականը լինէր: Դա Ասլանի շնորհալի ձեռքի գործն էր: Սեւ մատիտը ամենայն ճարտարութեամբ հնազանդել էր նրան: Եւ ես առաջին անգամ տեսնում էի մի այսպիսի հիանալի պատկեր:

Ասլանը տեսնելով, որ ես շատ գրաւուեցայ, ցոյց տուեց ինձ մի քանի ուրիշ թղթեր եւս, բայց նրանք պատկերներ չէին, ես նրանցից ոչինչ հասկանալ չկարողացայ, ինձ երեւում էին միայն թղթի վրայ խազխզած սեւ գծեր, որոնք բաժանուած էին գոյնզգոյն ներկերով:

— Դրանք ի՞նչ են, — հարցրի Ասլանից:

— Վանայ նահանգի աշխարհագրական քարտէզներն են, — պատասխանեց նա:

Ես դարձեալ ոչինչ հասկանալ չկարողացայ: